

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ 2024 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1174-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
հոկտեմբերի 18-ի «Պահեստագորային պատրաստության շրջանակներում
իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու
մասին» N 1174-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում
(այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
1) հավելվածի 10-րդ կետում «<մեկ>> բառը փոխարինել «<երկու>> բառով.
2) հավելվածի 13-րդ կետի առաջին նախադասությունում «<առաջ>> բառից
հետո լրացնել «<վարժական հավաքի կազմակերպման
նախապատրաստական աշխատանքների շրջանակներում
պահեստագորայինների>> բառերը, իսկ «<նպատակով>> բառից հետո
լրացնել «<(N 1.1 ձև)>> բառերը.
3) հավելվածի 14-րդ կետի՝
ա. առաջին նախադասությունում «<հիման վրա>> բառերից հետո լրացնել
«<(N 1.1 ձև)>> բառերը, իսկ «<դեպքերում>> բառերից հետո լրացնել «<N 1
ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա>> բառերը,
բ. երկրորդ նախադասությունում «<կամ ծառայողական>> բառերը հանել.
4) հավելվածի 30-րդ կետի երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

«<Հայտարարվող զինվորական վարժանքների կամ զորավարժությունների
կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում
զինվորական կոմիսարիատը զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու
և բուժհետազոտում անցկացնելու նպատակով պահեստագորայինին
ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու համար (N 3.1 ձև), որի
հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստագորայինը
սահմանված կարգով անցնում է բուժհետազոտում և դրա արդյունքներով
անցկացվող միջոցառմանը ներգրավվելու ենթակա ճանաչվելու դեպքում N 3
ձևի համաձայն տրված ծանուցման հիման վրա ուղարկվում է միջոցառման

անցկացման գործառնա՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով:»».

5) հավելվածի 40-րդ կետի երկրորդ նախադասությունում <<կամ ծառայողական>> բառերը հանել.

6) հավելվածը N 1 և N 3 ձևերից հետո համապատասխանաբար լրացնել N 1.1 և N 3.1 ձևերով՝ համաձայն ձև 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

Ձև 1

«Ձև N 1.1

Քաղաքացի _____
Բնակության վայրը _____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի _____ -ից մինչև 20 թվականի _____ -ը անցկացվող վարժական հավաքի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման:

Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին ներկայանալ (ամիսը) (օրը)

_____ զինվորական կոմիսարիատ հետևյալ՝
հասցեով՝ _____

վարժական հավաքին ներգրավելու նպատակով Ձեր զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար:

_____ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____

(զինկոմիսարիատ) (ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՍՏԱՑԱԿԱՆ

« ____ » _____ 20 թվականին զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝

_____ :
(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

« ____ » _____ 20 թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:□:

ՁԱ 2

«ՁԱ N 3.1

Քաղաքացի _____
Բնակության վայրը _____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20 թվականի _____ -ից մինչև 20 թվականի _____ -ը կազմակերպվող

_____ (միջոցառման անվանումը)

կազմակերպման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժհետազոտման: Անհրաժեշտ է 20 թ. _____-ի _____-ին ժամը _____-ին ներկայանալ (ամիսը) (օրը)

_____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝ _____

_____ (միջոցառման անվանումը)

Ներգրավվելու նպատակով Ձեր զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցնելու համար:

_____ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ _____
(զինկոմիսարիատ) (ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՍՏԱՑԱԿԱՆ

« ____ » _____ 20 թվականին զինվորական հաշվառման տվյալների ստուգման և բուժիետագոտման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա՝

_____ :
(անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը)

« ____ » _____ 20 թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:□: